

Կ-1093⁷-30.05.2025-ՖԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները կիրառելի են նաև սույն օրենքի 18-րդ և 19-րդ գլուխների նկատմամբ»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) Վերնագիրը «մերժումը» բառից հետո լրացնել «և նախնական համաձայնության գործողության դադարեցումը».

2) 1-ին մասում «կարող է մերժել» բառերը փոխարինել «մերժում է» բառերով.

3) 1-ին մասի 1-ին կետից հանել «ֆիզիկական» բառը.

4) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1¹-ին կետ.

«1¹) նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».

5) 1-ին մասի 7-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով.

6) 1-ին մասի 8-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով.

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս.

«3. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նախնական համաձայնության տրամադրման օրվանից հետո մինչև նշանակալից մասնակցության փաստացի

ծեռքերումը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի դադարեցնել նշանակալից մասնակցության ծեռքերման նախնական համաձայնության գործողությունը»:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել **«ծեռքերման նախնական համաձայնության գործողության»** բառերը.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե լիցենզավորման ընթացքում կամ նշանակալից մասնակցության ծեռքերման ժամանակ Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաև եթե անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ծեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված նշանակալից մասնակցության նախնական համաձայնության մերժման հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, ըստ որոնց՝ ի հայտ են եկել Ընկերության հետ կապված անձանց (իսկ Ընկերության հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաև նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգել Ընկերության ապահովագրողների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի Ընկերությունում իր ունեցած ներդրումները, կամ Ընկերության նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել Ընկերության գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է Ընկերության ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով»:

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ընկերության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը

վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:».

4) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

5) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս.

«4. Եթե նշանակալից մասնակցության ձեռքբերումից հետո առաջանում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1¹-ին կետով նախատեսված հիմքը, Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ծայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ծայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ընկերության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2¹-ին կետ.

«2¹) ներառված չէ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».».

2) 5-րդ կետում «անցյալում» բառից առաջ լրացնել «կամ որի հետ փոխկապակցված անձը» բառերը, իսկ «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 88-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.

«6. Ապահովագրական միջնորդների նշանակալից մասնակիցները չեն կարող ներառված լինել Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով

հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում:»:

Հոդված 6. Օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2¹-ին կետ.

«2¹) ներառված չէ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».

2) 5-րդ կետում «անցյալում» բառից առաջ լրացնել «կամ որի հետ փոխկապակցված անձը» բառերը, իսկ «Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված» բառերով:

Հոդված 7. Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.2-րդ կետ.

«4.2) նշանակալից մասնակիցներից կամ այդ մասնակիցների հետ փոխկապակցված անձանցից թեկուզ մեկն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես ապահովագրական բրոքերային գործունեություն իրականացնող կազմակերպության բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի գործողությունները կարող են հանգեցնել այդ կազմակերպության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.3-րդ կետ.

«4.3) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.»:

Հոդված 8. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 99¹-րդ հոդված.

«Հոդված 99¹. Ապահովագրական բրոքերի նշանակալից մասնակցի մասնակցության դադարեցումը և նախնական համաձայնության գործողության դադարեցումը

1. Եթե լիցենզավորման ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաև եթե անձի՝ սույն օրենքով սահմանված ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կամ 4.2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, ըստ որոնց՝ ի հայտ են եկել ապահովագրական բրոքերի հետ կապված անձանց (իսկ այդ կազմակերպության հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաև նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ ապահովագրական բրոքերի ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգվել հաճախորդների շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում իր ունեցած ներդրումները, կամ ապահովագրական բրոքերի նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել ապահովագրական բրոքերի գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է ապահովագրական բրոքերի ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:

2. Եթե նշանակալից մասնակցության ձեռքբերումից հետո առաջանում է սույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-ին կետով նախատեսված հիմքը, ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետին հաջորդող օրվանից ապահովագրական բրոքերի նշանակալից մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված

ծայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»:

Հոդված 9. Օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.2-րդ կետ.

«2.2) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերով, 88-րդ հոդվածի 5-րդ մասով կամ 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կամ 4.2-րդ մասերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում իր ունեցած համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը, իսկ այդ ժամկետում համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով: Սույն մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ծայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ընկերության կամ ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել

Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերի առաջացման դեպքում ապահովագրական գործակալը այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված որևէ հիմք բացահայտելու կամ գործակալի կողմից սույն մասով սահմանված տեղեկությունը ստանալու դեպքում ապահովագրական գործակալին հանում է հաշվառումից:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 4-րդ կամ 6-րդ հոդվածներով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Ընկերությունը կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում Ընկերության կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի համապատասխան ղեկավարին կամ համապատասխան պատասխանատու անձին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ: Սույն մասով նախատեսված ժամկետում Ընկերության կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի կողմից համապատասխան ղեկավարին կամ համապատասխան պատասխանատու անձին գրանցումից հանելու միջնորդագիր Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկը ընդունում է տվյալ ղեկավարին կամ պատասխանատու անձին գրանցումից հանելու վերաբերյալ որոշում:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով լրացվող 1¹-ին կետով, 5-րդ հոդվածով կամ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 4.3-րդ կետով սահմանված հիմքն առաջանալու դեպքում Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաև անձը գրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ծայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաև ձեռք բերված բաժնետոմսերը ծայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ընկերության կամ ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները կիրառելի են նաեւ սույն օրենքի 18-րդ եւ 19-րդ գլուխների նկատմամբ»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) Վերնագիրը «մերժումը» բառից հետո լրացնել «եւ նախնական համաձայնության գործողության դադարեցումը».

2) 1-ին մասում «կարող է մերժել» բառերը փոխարինել «մերժում է» բառերով.

3) 1-ին մասի 1-ին կետից հանել «ֆիզիկական» բառը.

4) 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1¹-ին կետ.

«1¹) նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում».

5) 1-ին մասի 7-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով.

6) 1-ին մասի 8-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով.

7) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս.

«3. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նախնական համաձայնության տրամադրման օրվանից հետո մինչեւ նշանակալից մասնակցության փաստացի ձեռքբերումը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի դադարեցնել նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողությունը»:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «ձեռքբերման նախնական համաձայնության գործողության» բառերը.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե լիցենզավորման ընթացքում կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման ժամանակ Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաեւ եթե անձի՝ սույն օրենքով սահմանված կարգով Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված նշանակալից մասնակցության նախնական համաձայնության մերժման հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, ըստ որոնց՝ ի հայտ են եկել Ընկերության հետ կապված անձանց (իսկ Ընկերության հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաեւ նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգել Ընկերության ապահովագրիների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի Ընկերությունում իր ունեցած ներդրումները, կամ Ընկերության նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել Ընկերության գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է Ընկերության ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:».

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու եւ առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ընկերության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:».

4) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

5) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս.

«4. Եթե նշանակալից մասնակցության ձեռքբերումից հետո առաջանում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1¹-ին կետով նախատեսված հիմքը, Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաեւ անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաեւ ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ընկերության որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի

խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2¹-ին կետ.

«21) ներառված չէ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպություն՝ Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».».

2) 5-րդ կետում «անցյալում» բառից առաջ լրացնել «կամ որի հետ փոխկապակցված անձը» բառերը, իսկ «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 88-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.

«6. Ապահովագրական միջնորդների նշանակալից մասնակիցները չեն կարող ներառված լինել Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպության՝ Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».»:

Հոդված 6. Օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2¹-ին կետ.

«21) ներառված չէ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպության՝ Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.».».

2) 5-րդ կետում «անցյալում» բառից առաջ լրացնել «կամ որի հետ փոխկապակցված անձը» բառերը, իսկ «Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված» բառերով:

Հոդված 7. Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.2-րդ կետ.

«4.2) նշանակալից մասնակիցներից կամ այդ մասնակիցների հետ փոխկապակցված անձանցից թեկուզ մեկն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես ապահովագրական բրոքերային գործունեություն իրականացնող կազմակերպության բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի գործողությունները կարող են հանգեցնել այդ կազմակերպության

սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության եւ գործարար համբավի վարկաբեկմանը».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4.3-րդ կետ.

«4.3) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպության ~~Միացյալ ազգերի կազմակերպության~~ անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում»:

Հոդված 8. Օրենքում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 99¹ -րդ հոդված.

«Հոդված 99¹. Ապահովագրական բրոքերի նշանակալից մասնակցի մասնակցության դադարեցումը եւ նախնական համաձայնության գործողության դադարեցումը

1. Եթե լիցենզավորման ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաեւ եթե անձի՝ սույն օրենքով սահմանված ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ձեռք բերելուց հետո առաջանում է սույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կամ 4.2-րդ կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ եթե ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, ըստ որոնց՝ ի հայտ են եկել ապահովագրական բրոքերի հետ կապված անձանց (իսկ այդ կազմակերպության հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաեւ նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ ապահովագրական բրոքերի ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգվել հաճախորդների շահերը, ապա Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում իր ունեցած ներդրումները, կամ ապահովագրական բրոքերի նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել ապահովագրական բրոքերի գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է ապահովագրական բրոքերի ֆինանսական վիճակին: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում համապատասխան ներդրումները չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով:

2. Եթե նշանակալից մասնակցության ձեռքբերումից հետո առաջանում է սույն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-ին կետով նախատեսված հիմքը, ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաեւ անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաեւ ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված

ժամկետին հաջորդող օրվանից ապահովագրական բրոքերի նշանակալից մասնակիցը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու եւ առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:»:

Հոդված 9. Օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.2-րդ կետ.

«2.2) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ Միավորված Ազգերի Կազմակերպության Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձեւերով հրապարակված զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում.»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերով, 88-րդ հոդվածի 5-րդ մասով կամ 99-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կամ 4.2-րդ մասերով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի առաջարկելու, որպեսզի Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ժամկետում օտարի Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում իր ունեցած համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը, իսկ այդ ժամկետում համապատասխան ներդրումները կամ պահանջի իրավունքը չօտարելու դեպքում օտարումը կարող է իրականացվել դատական կարգով: Սույն մասով նախատեսված Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու եւ առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից: Ընկերության կամ ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերի առաջացման դեպքում ապահովագրական գործակալը այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված որեւէ հիմք բացահայտելու կամ գործակալի կողմից սույն մասով սահմանված տեղեկությունը ստանալու դեպքում ապահովագրական գործակալին հանում է հաշվառումից:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 4-րդ կամ 6-րդ հոդվածներով սահմանված հիմքերի առաջացման դեպքում Ընկերությունը կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում Ընկերության կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի համապատասխան ղեկավարին կամ համապատասխան պատասխանատու անձին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ: Սույն մասով նախատեսված ժամկետում Ընկերության կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի կողմից համապատասխան ղեկավարին կամ համապատասխան պատասխանատու անձին գրանցումից հանելու միջնորդագիր Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկը ընդունում է տվյալ ղեկավարին կամ պատասխանատու անձին գրանցումից հանելու վերաբերյալ որոշում:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով լրացվող 1¹ -ին կետով, 5-րդ հոդվածով կամ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 4.3-րդ կետով սահմանված հիմքն առաջանալու դեպքում Ընկերության կամ ապահովագրական բրոքերի կանոնադրական հիմնադրամում նշանակվից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ կիրառվում է «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջը, ինչպես նաեւ անձը զրկվում է մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից, ինչպես նաեւ ձեռք բերված բաժնետոմսերը ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: Ընկերության կամ ապահովագրական բրոքերի որոշումների կայացման գործընթացը չխաթարելու նպատակով՝ Կենտրոնական բանկի խորհուրդն իրավասու է որոշումների կայացման ժամանակ քվեարկելու իրավունքը վերապահել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված ժամանակավոր կառավարման մարմնին: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներ, նշանակման ու գործունեության կարգ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱՐԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1093-30.05.2025-ՖԿ-011/0) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «և օտարերկրյա բանկերի մասնաձյուղերը» բառերը առաջարկվում է փոխարինել «(այդ թվում՝ օտարերկրյա բանկերի մասնաձյուղերը)» բառերով: Փոփոխությունը առաջարկվում է իրականացնել հստակեցնելու համար, որ օրենքի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի իմաստով «բանկ» հասկացությունը ներառում է «օտարերկրյա բանկերի	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			մասնաճյուղերը»:		
2.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով. «2) 4-րդ կետի «ը» ենթակետը «ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված հարաբերությունների մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի կառավարումն իրականացնող անձ չունեցող ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերը» բառերով.»: Փոփոխությունը առաջարկվում է իրականացնել ««Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ 23-Ն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված անցումային ժամկետներում ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի՝ հաշվետվություն տրամադրող անձ լինելը պահպանելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 4.2-րդ մասում «օրենքի 29-րդ հոդվածով» բառերը առաջարկվում է փոխարինել «օրենքով» բառով: Փոփոխությունը առաջարկվում է իրականացնել՝ հաշվի առնելով, որ	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		օրենքի նախագիծ, հոդված 25 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	տրաստերի կառավարիչների համար պարտականություններ նախատեսվելու են ոչ միայն օրենքի 29-րդ, այլ նաև օրենքի 9-րդ հոդվածով: Համարժեք փոփոխություն առաջարկվում է իրականացնել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում: Մասնավորապես՝ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող 1.3-րդ մասում առաջարկվում է «օրենքի 29-րդ հոդվածով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:		
4.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 27	Նախագծի 27-րդ հոդվածում՝ - 3-րդ մասում «25-րդ հոդվածի» բառերը փոխարինել «24-րդ հոդվածի» բառերով, իսկ «դրույթները» բառից հետո առաջարկվում է լրացնել «տրաստի կամ այլ համանման իրավաբանական կազմավորման առնչությամբ» բառերով: Դրույթների հետաձգված կիրառման վերաբերյալ նշված հստակեցումը առաջարկվում է ավելացնել տարընկալումներից խուսափելու համար՝ հաշվի առնելով, որ օրինակ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			5-րդ կետով նախատեսված դրույթները վերաբերում են նաև հաշվետվություն տրամադրող անձանց: Նախագծի 27-րդ հոդվածում առաջարկվում է 5-րդ մասում «16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 20-րդ հոդվածի» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 19-րդ հոդվածի» բառերով:		
5.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 27	Նախագծի 27-րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ նախադասությամբ. «Սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 4.2-րդ մասով նախատեսված դրույթները տրաստի կամ այլ համանման իրավաբանական կազմավորման համար ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»: Փոփոխությունն առաջարկվում է իրականացնել՝ հաշվի առնելով, որ Արդարադատության նախարարության առաջարկով որոշվել էր հետաձգել տրաստերի կառավարիչների համար պատասխանատվություն նախատեսող դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետը (6 ամիս հրապարակման պահից): Համապատասխան անցումային	Ընդունվել է: Նախագծում է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			դրույթը նախատեսվել էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցների համար, սակայն համարժեք անցումային դրույթ չէր նախատեսվել Նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցների համար, ինչն առաջարկվում է շտկել:		
6.	ՀՀ կառավարություն	««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Գրավատնային գործունեության	Առաջարկվում է ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հարակից բոլոր նախագծերում «Միացյալ Ազգերի Կազմակերպություն» բառերը փոխարինել «Միավորված Ազգերի Կազմակերպություն» բառերով՝ ապահովելու նշված միջազգային մարմնի անվանման հայերեն պաշտոնական տարբերակի ճշգրիտ մատնանշումը բոլոր օրենքների նախագծերում:	Ընդունվել է: Նախագծերում են կատարվել համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունն երի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վճարահաշվարկա յին համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունն երի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր			
7.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածում «լրացնել» բառից առաջ ավելացնել «հոդվածը» բառը՝ օրենքի լրացվող դրույթին հղումը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		հողված 4			
8.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հողված 4	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով՝ օրենքում լրացվող 6 ¹ -րդ մասում հղումը «ա» կետին փոխարինել հղումով՝ «1)» կետին: Առաջարկի նպատակն է հղումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	ՀՀ Կառավարություն	««Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հողված 4	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով՝ օրենքի խմբագրվող հոդվածի 6-րդ մասում «մինչև չվերանան սույն» բառերից հետո ավելացնել «հողվածի 6-րդ» բառերը՝ համապատասխան նորմին հղումը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
10.	ՀՀ Կառավարություն	««Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Հոդված 6, մաս 4	Առաջարկվում է Նախագծի 6-րդ Հոդվածի 4-րդ մասում «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով» բառերից հետո ավելացնել «լրացվող 3 ¹ -ին կետով»՝ բառերը փաթեթի մյուս օրենքների նախագծերում օգտագործված ձևակերպումների հետ միատեսակություն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	ՀՀ Կառավարություն	««Արժութային կարգավորման և արժութային	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ	Ընդունվել է: Նախագծում է կատարվել համապատասխան	Ընդունվել է:

		վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծ, Հոդված 3, մաս 4	համապատասխան նորմին հղումը, այն է՝ «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով կամ 2-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկը Օրենքի 7 ¹ -րդ հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ հոդվածով» բառերով: Առաջարկը նպատակ ունի հստակեցնել հղումը:	փոփոխություն:	
--	--	---	---	---------------	--